# Արձանագրություն N 2

## «ԼՈՒՍ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*Ք. Երևան, Աբովյան 7*

*«16» «06» 2016թ*
*ժ.11:00*

*Մասնակցում էին*
Հանձնաժողովի նախագահ Շ. Սաֆարյան
Հանձնաժողովի անդամներ Է. Աղայան, Ն. Սարգսյան և Ս. Պապոյան
Հանձնաժողովի քարտուղար Հայկ Ղազարյանը

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
(Է. Աղայան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | «ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ | ք. Երևան, Պուշկին 1 | ՀՎՀՀ 02614085<br>cpsarmenia@gmail.com<br>Հեռ. /+374/ 10-54-09-11 |

**Որոշում թիվ 1.**

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից ներկայացված է ստորև բերված աղյուսակում

ՀՀ դրամ

| Չ/հ | Գնման առարկան | «ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ | |
|---|---|---|---|
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Բենզին ռեգուլյար | 4375000 | 5250000 |
| 2 | Դիզելային վառելիք | 465000 | 465000 |

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

**Որոշում թիվ 2.**

Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ամփոփվեց «ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները<br>Գնահատականը | | | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները<br>Մասնակցի անվանումը<br>«ՍիՓիԷս Օյլ Քորփորեյշն» ՍՊԸ |
|---|---|---|---|
| 1 | Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Բավարար<br>Անբավարար | Բավարար |
| 2 | Բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին | Բավարար<br>Անբավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար<br>Անբավարար | Բավարար |

**Որոշում թիվ 3**.

Հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ` հրավերով սահմանված` ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են.

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

**Որոշում թիվ 4**.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընթացակարգի բոլոր չափաբաժինների 1-ն տեղ զբաղեցնող ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

**Որոշում թիվ 5**.
Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը հանձնաժողովը որոշեց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

*(Է. Աղասյան)*

**Որոշում թիվ 6.**
Հանձնաժողովը որոշեց «ԼՈՒՍ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Սեբաստիա 7 հասցեում:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ` | [signature] | Շ. Սաֆարյան |
| Անդամներ` | [signature] | Է. Աղասյան |
| | [signature] | Ն. Սարգսյան |
| | [signature] | Ս. Պապոյան |
| Քարտուղար` | [signature] | Հայկ Ղազարյան |

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան, Սեբաստիա 7

«16» «06» 2016թ.

«ԼՈՒՍ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Աղասյանս, անդամներ՝ Ն. Սարգսյանս և Ս. Պապոյանս հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ վերոնշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Է. Աղասյան

Անդամներ՝ ______________ Ն. Սարգսյան

______________ Ս. Պապոյան